ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 2, 1963 Общественные науки

Հ. Թոփուզյան

ՀԱՅԵՐԻ ՄԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՍԻՐԻԱՅԻ ԵՎ ԼԻԲԱՆԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՊԱՅՔԱՐԻՆ 1943—1945 ԹԹ.

1943—1945 թթ. Սիրիայում և Լիբանանում հզոր վերելք ապրեցին ազգային-ազատագրական շարժումները ֆրանսիական իմպերիալիզմի ստրկացուցիչ տիրապետության դեմ։

Առանց կրոնի և ազգության խտրության, այդ շարժումներն իրենց ոլորտն էին ներգրավել բանվորներին ու գյուղացիներին, ինչպես նաև մանր ու միջին բուրժուազիայի լայն խավերին, որոնք ենթարկված էին իմպերիալիզմի ճնշմանը և կաշկանդված ֆեոդալիզմի կապանքներով։

Արաբ ժողովրդի կողքին, միավորված ճակատով ռևոլյուցիոն միջոցառումներին մասնակցելով, Սիրիայի և Լիբանանի հայությունը զգալի չափով նպաստեց ֆրանսիական իմպերիալիզմի տիրապետության տապալմանը և ազգային անկախության վերականգնմանը։

* * *

1941 թ. մայիսի 27-ին, վիշիական գեներալ Դենցի հրոսակներին Սիրիայից ու Լիբանանից վտարելու գործում այդ երկրների ժողովրդական զանգվածների աջակցությունն ապահովելու նպատակով, Ազատ ֆրանսիական զինված ուժերի հրամանատարությունը մանդատները վերացնելու խոստում տվեց, իսկ նույն թվականի նոյեմբերի 26-ին գեներալ Կատրուն Ազատ Ֆրանսիայի անունից Սիրիան ու Լիբանանը հռչակեց անկախ և սուվերեն պետություններ։

1942 թ. Ալամեյնում գերմանա-իտալական զորքերի պարտությամբ դաշնակիցների դեմ Մերձավոր և Միջին Արևելքում ստեղծված վտանգը վերացավ, ուստի և ոչ մի լուրջ պատճառ չկար Սիրիան ու Լիբանանը գրավման ներքո պահելու։ Սակայն ֆրանսիական իմպերիալիստները չուզեցին հարգել իրենց հանդիսավոր խոստումները և հեռանալ այդ երկրներից։

1943 թ. սեպտեմբերի 21-ին Լիբանանի կառավարության պրեմիեր մինիստր նշանակվելուց հետո Ազգային պարտիայի պարագլուխ Ռիադ Սոլհը առաջարկեց Սահմանադրությունից ջնջել այն բոլոր հոդվածները, որոնք բացառիկ իրավունքներ էին տալիս ֆրանսիական իմպերիալիզմին՝ իբրև ղեկավարման մանդատ ունեցող պետության։ Նոյեմբերի 5-ին, Ազատ ֆրանսիական ուժերի լիազոր ներկայացուցիչ Հելլեոն հրապարակեց պաշտոնական կոմյունիկե, որտեղ ասված էր. «Այդ հոդվածները չի կարելի առանց փոխադարձ համաձայնության, միակողմանի կարգով ջնջել, հետևաբար անվավեր եմ հայտարարում Լիբանանի կառավարության որոշումը Սահմանադրության փոփոխության մասին»[1]։ Այնուամենայնիվ, նոյեմբերի 8-ին, Լիբանանի

[1] „L'Orient", Beyrouth, 6 Novembre, 1943.

պառլամենտը մեծ ոգևորությամբ վերանայեց Սահմանադրությունը՝ հանելով ֆրանսիական մանդատին վերաբերող հոդվածները։ Դա նշանակում էր, որ ֆրանսիական իմպերիալիզմի հետագա գոյությունը Լիբանանում այլևս անհնարին է համարվում։

Սահմանադրության վերանայման գործում նշանակությունից զուրկ չէին պառլամենտի հայ պատգամավորների քվեները։ Վերանայման առաջարկի դեմ օպոզիցիա ստեղծելու նպատակով, ֆրանսիական իմպերիալիզմի գործակալները աշխատում էին քրիստոնյա պատգամավորներին, այդ թվում և երկու հայերի, դրավել իրենց կողմը։ Արտահայտելով հայ աշխատավորական զանգվածների կամքը, պառլամենտի անդամ Հրաչյա Շամլյանը քվեարկեց Լիբանանը ստրկացնող այդ հոդվածների դեմ։ Իսկ դաշնակների ներկայացուցիչը, որը վաղուց ի վեր հայտնի էր ֆրանսիական իմպերիալիզմին մատուցած իր ծառայություններով, պարզապես չմասնակցեց այդ պատմական անմոռաց նիստին։

Լիբանանի պառլամենտի այդ ակտին ֆրանսիական իմպերիալիստները պատասխանեցին նոյեմբերի 11-ի դիշերը ձերբակալելով Լիբանանի Ռեսպուբլիկայի պրեզիդենտ Բեշարա էլ-Խուրիին, պրեմիեր Ռիադ Սոլհին և մի շարք մինիստրների։ Ապա, դեկրետով պրեզիդենտ նշանակվեց Ֆրանսիայի հայտնի գործակալ Էմիլ Էդդեն, որի կազմած կառավարությունը շարժանացավ ժողովրդի հավանությանը։

Այդ միջոցառումները բողոքի հզոր ալիք բարձրացրին Սիրիայում և Լիբանանում։ «Լիբանանի ազգային համագումարը» ժողովրդին կոչ ուղղեց՝ բոյկոտի ենթարկել ֆրանսիական իմպերիալիզմի դրածոներին և պաշտպանել ազգային կառավարությունը, որի մի շարք անդամները զինված դիմադրություն էին պատրաստում Լեռնային Լիբանանի Բշամուն գյուղում։ Բեյրութում հայտարարվեց ընդհանուր գործադուլ, որին Դամասկոսն ու Հալեպը արձագանքեցին համերաշխության լայն շարժումով։ Ֆրանսիական բանակը կրակեց ժողովրդի վրա բողոքի ցույցերը փողոցային մարտերի վերածելով։ Լիբանանի իրադարձությունները խոր հուզում առաջացրին նաև մյուս արաբական երկրներում։ Ֆրանսիական իմպերիալիզմի դեմ ցույցեր տեղի ունեցան նաև Կահիրեում, Երուսաղեմում, Բաղդադում։

Գեներալ Կատրուն Ալժիրից ժամանեց Բեյրութ։ Նոյեմբերի 21-ին ֆրանսիական իշխանությունները ազատ արձակեցին բանտարկված պետական գործիչներին, սահմանադրական կարգը վերահաստատվեց։ Դեկտեմբերի 23-ին գեներալ Կատրուի և Սիրիայի ու Լիբանանի կառավարությունների ներկայացուցիչների միջև համաձայնություն կայացավ այն մասին, որ 1944 թվականի մայիսի 1-ից այդ կառավարություններին փոխանցվեն մանդատի որոշ ֆունկցիաները։

Ֆրանսիական իմպերիալիզմի կատարած դիվումները կրում էին մասնակի բնույթ։ Դրանք նախատեսում էին մարսատան, նավահանգստի, փոստհեռագրական և այդ կարգի մի շարք այլ սպասարկությունների փոխանցումը ազգային կառավարությանը։ Հիմնական հարցը՝ ֆրանսիական և բրիտանական զորքերի հեռացման հարցը, որն ամենից ավելի նշանակություն ուներ Սիրիայի և Լիբանանի անկախության ամրապնդման տեսակետից, մնում էր

---

2 «Ժողովուրդի Ձայն», Բեյրութ, 14 մայիսի 1947 թ.։

առկախ։ Այնուամենայնիվ, այդ թեկուզ մասնակի զիջումներով, ֆրանսիական իմպերիալիզմը մի անգամ ևս հաստատում էր երկու երկրների անկախությունը։

1943 թ. նոյեմբերի 1-ից մինչև 21-ը բախտորոշ օրեր էին Սիրիայի ու Լիբանանի ազգային անկախության պայքարի համար։

Նոյեմբերյան շարժումների կազմակերպողն ու առաջնորդը հանդիսացավ «Լիբանանի ազգային համագումարը», որի մեջ միավորվել էին աշխատավորական, ազգային անկախության կողմնակից բուրժուական և մանր բուրժուական պարտիաներն ու կազմակերպությունները, ինչպես նաև կալվածատերերի և կոմպրադորական բուրժուազիայի որոշ խմբակցություններ։ Հասարակական այդ հակադիր ուժերի համագործակցության հիմք էր ծառայում ֆրանսիական իմպերիալիզմի տիրապետությունը ամեն գնով տապալելու խնդիրը։

Ֆրանսիական իմպերիալիզմի վտարումով, մինչ աշխատավորության և ազգային բուրժուազիայի կազմակերպությունները ձգտում էին Լիբանան՝ ինքնուրույն պետականության ստեղծմանը, ընդհակառակը, հետադիմական խմբակցությունները երազում էին ազատագրված Լիբանանը դնել բրիտանական իմպերիալիզմի տիրապետության ներքո՝ իրենց կապիտալների շրջանառության ասպարեզը ընդարձակելու համար։ Չպետք է անտեսել, որ 1941 թվականից Անգլիան նկատելի դեր էր խաղում, մանավանդ այն բանից հետո, երբ Սիրիայից ու Լիբանանից գեներալ Դենցին վտարելու համար ֆրանսիացիներին օգնելու պատրվակով նրան հաջողվեց զորք ուղարկել այդ երկրները։

1941—1943 թթ. անգլիական գեներալ Սպիրսը, որը վարում էր ֆրանսիական իմպերիալիզմին Մերձավոր Արևելքից հեռացնելու քաղաքականությունն, կարողացավ Սիրիայում և Լիբանանում բրիտանական իմպերիալիզմի համար հենարաններ ստեղծել։ 1943 թ. ամռանը, Լիբանանի պառլամենտական ընտրություններում Բեշարա էլ-Խուրիի և Ռիադ Սոլհի հաջողության գործում նկատելի դեր կատարեցին գեներալ Սպիրսի գործակալները։

Քաջ գիտենալով, որ Սիրիայի ու Լիբանանի ժողովուրդները բրիտանական իմպերիալիզմին ատում են այնքան, որքան ֆրանսիական իմպերիալիզմին, դրգռականների պրոպագանդայի ապարատը մերկացնում էր էլ-խուրիներին, ռիադ-սոլհերին և մյուսներին, նրանց բրիտանական իմպերիալիզմի գործակալ ներկայացնելով, և կոչ էր անում՝ ժողովրդին՝ չմասնակցել «Լիբանանի ազգային համագումարի» կազմակերպած ընդհանուր գործադուլին, որն իբր ծառայելու էր սոսկ բրիտանական իմպերիալիզմի տիրապետության հաստատմանը։

Ընդհանուր գործադուլը վճռական նշանակություն ուներ էմիլ էդդեի դրածո իշխանության տևականացումը կանխելու համար։ Նոյեմբերի 11-ից մինչև 21-ը, ֆրանսիական իմպերիալիստները բոլոր միջոցներով աշխատեցին ձախողել այն, սակայն ապարդյուն։ Նրանք, նախ փորձեցին պառակտում առաջացնել Ազգային համագումարի շարքերում, օգտագործելով նրա բաղկացուցիչ կազմակերպությունների սոցիալ-քաղաքական հակասությունները և հետո, իբրև փրկության վերջին միջոց բրիստոնյա-իսլամական հակամարտությունները։ Զեռնամուխ լինելով իրենց այդ նպատակի իրականացմանը, ֆրանսիական իմպերիալիստները փորձեցին օգտագործել նաև հայերին։ Ազգային համագումարի միջոցառումներից հայերին հեռու պահելով, նրանք կարող էին ծանր հարված հասցնել ընդհանուր գործադուլի հաջողու-

թյանը, նկատի ունենալով, որ հայերը կազմում էին Բեյրութի ազգաբնակչության 20—25%-ը։

Նախ և առաջ, ֆրանսիական իմպերիալիզմը և նրա գործակալները փորձեցին լարվածություն ստեղծել հայերի և արաբների միջև։ Անդրադառնալով այդ մտքեր պղտորելու անհաջող փորձին, «Լիբանանի ազգային համագումարի» Բերթը գրում էր. «Այս երկրում ապրող հայերին վախեցնելու համար, չարամիտ խառնակիչները լուր տարածեցին, թե մեր կառավարությունը նախօրոք պատրաստված ծրագրի համաձայն, որոշել էր հայերին զրկել լիբանանյան քաղաքացիությունից։ Քիչ էր մնում, որ մեր հայ եղբայրները հավատային այդ ստին, եթե նրանց ղեկավարները չփարատեին այն, չդիմակաղերծեին նրա հեղինակներին և հայ ժողովրդին չհրավիրեին եղբայրանալ Լիբանանի ժողովրդի հետ։ Հայերը չեն կարող մոռանալ, որ թուրքական լծից ազատվելու համար իրենց պայքարում այս երկրի ազգային ղեկավարների ու ազատասերների հետ եղել են պայքարի ընկերներ...»[3]։

Բացի այդ, ֆրանսիական իմպերիալիստները փորձեցին քրիստոնյաներին լարել մահմեդականների դեմ։ Ազգային համագումարը հիմնականում իսլամական նախաձեռնություն ներկայացնելով, նրանք լուր էին տարածում, որ Էմիլ Էդդեի տապալումից հետո, էլ-Խուրի-Սոլհ կառավարությունը փոփոխություններ է կատարելու սահմանադրության մեջ, իսլամների օգտին խախտելով կրոնական համայնքների առկա դրությունը։ Այդպիսի միջոցառման դեպքում, իհարկե, կտուժեին նաև հայերը, որոնք իրրև հայ լուսավորչական համայնք ունեին մի շարք արտոնություններ։

Հայկական շրջանում այդ կարգի պրոպագանդայի հավանական թյուրիմացությունները կանխելու նպատակով, նոյեմբերի 20-ին «Լիբանանի ազգային համագումարը» անհրաժեշտ է համարում մի պատվիրակություն ուղարկել Աթիլիասի Հայոց կաթողիկոսարան՝ տեղապահ Խաչ Աջապահյանի մոտ։ Պատվիրակությունը խոսում է Լիբանանում ծավալված շարժումների ազգային բնույթի մասին և հավաստիացնում, որ դավանական բոլոր իրավունքները հարգվելու են, ոչ մի համայնք չի իրավազրկվելու մի ուրիշ համայնքի օգտին[4]։ Տեղապահը «պատվիրակության ապահովցուց թե հայ և արաբ ժողովուրդներու եղբայրակցությունը անքակտելի է, և այդպես ալ պիտի մնա»[5]։

Երիտասարդ գործակալների ջանքերի հակառակ, ֆրանսիական իմպերիալիզմին չհաջողվեց ընդհանուր գործադուլի ոլորտից հեռու պահել հայ ժողովրդական զանգվածներին։ Ամբողջ գործադուլի ընթացքում հայաբնակ թաղամասերի խանութները փակ մնացին և հայ աշխատավորությունը ակտիվ կերպով մասնակցեց փողոցային ցույցերին։ Այդ պատվաբեր դիրքավորումը, որն արժանացավ արաբ ժողովրդի և նրա հայրենասեր պետական գործիչների դրվատանքին, հնարավոր դարձավ շնորհիվ հայ աշխատավորության առաջավոր խավերի ճիգերին։

Ընդհանուր գործադուլի սկզբից, Սիրիայի և Լիբանանի կոմունիստական պարտիայի հայկական հատվածը փորձեց ստեղծել Լիբանանի հայ ժողովրդական միավորված ճակատ, որի ներկայացուցիչները հայության անունից պաշ-

3 Լիբանանի ազգային համագումարի օրգանը, որի անվան տեղ դրված է եղել հարցական մի նշան, 23 նոյեմբերի 1943 թ.։

4 «Ժողովուրդի Ձայն», 27 նոյեմբերի 1943 թ.։

5 Նույն տեղում։

տոնապես մասնակցեին Ազգային համագումարի ղեկավարության միջոցառումներին։ Սակայն այդ ծրագիրը չիրագործվեց ֆրանսիական իմպերիալիզմի մի շարք հայազգի գործակալների հարուցած խոչընդոտների պատճառով։

Ֆրանսիական իմպերիալիստները որոշակի հույսեր էին կապել դաշնակների հետ։ Բայց ապարդյուն։ Նախ, իբրև ֆաշիզմի հետ գործակցելու հանցագործությամբ վարկաբեկված կազմակերպության անդամներ, դաշնակները չհամարձակվեցին օրը ցերեկով պայքարի ասպարեզ իջնել (ինչ խոսք, որ ասպարեզ իջնելու դեպքում էլ, նրանք հաջողություն չէին ունենա)։ Երկրորդ, նրանց կաշկանդում էր նաև այն, որ բրիտանական իմպերիալիզմը հանդես էր գալիս իբրև անուղղակի շահագրգռող կողմ և ներքին կարգով օժանդակում էր Ազգային համագումարի միջոցառումներին։ Այդ պայմաններում, դաշնակները ֆրանսիական իմպերիալիզմից ստացած զենքերը օգտագործեցին ոչ թե հայ-արաբական խռովություններ առաջացնելու, այլ իրենց ակումբները և շեֆերին իբր թե հավանական հարձակումների դեմ պաշտպանելու համար։

Բացի այդ, տակավին ամիսներ առաջ, պառլամենտական ընտրությունների նախօրյակին կատարված սակարկություններով, ֆրանսիական իմպերիալիստներին հաջողվել էր «բարեկամներ» ճարել մի շարք բուրժուական քաղաքական խմբակցությունների ղեկավարների մեջ։ Այդ պատճառով էլ, Լիբանանի ազգային համագումարի ջանքերը՝ հայ բուրժուազիայի լայն խավերը նոյեմբերյան շարժումներին մասնակից դարձնելու ուղղությամբ, չպսակվեցին լիակատար հաջողությամբ։

Ընդհանուր գործադուլին հայերի մասնակցության խնդրում վճռական դեր խաղաց Սիրիայի և Լիբանանի կոմունիստական պարտիայի հայկական հատվածը։ Հայ աշխատավորության առաջավոր խավերը կարողացան ռևոլյուցիոն շարժումների ոլորտը ներգրավել հայ բանվորներին, գյուղացիներին, ծառայողներին, արհեստավորներին, խանութպաններին և այլն։ Հայկական հատվածի գլխավորությամբ Ազգային համագումարի դրոշի ներքո գործելով, Լիբանանի հայերը ազնվորեն կատարեցին իրենց հայրենասիրական պարտականությունը երկրորդ հայրենիքի նկատմամբ։ Այդ մասին են վկայում արաբական մամուլի, քաղաքական և պետական գործիչների գնահատականները։

«Լիբանանի ազգային համագումարի» օրգանի հաղորդումով, ընդհանուր գործադուլի հաջող ավարտից հետո, արաբ հայրենասերների մի պատվիրակություն այցելում է Անթիլիասի կաթողիկոսարանը «շնորհակալություն հայտնելու այն ազնիվ դիրքի համար, որ հայ համայնքի զավակները որդեգրեցին Լիբանանի դատի հանդեպ»[6]։ «Աստված պահե մեր հայ եղբայրներին» խորադրի տակ, անդրադառնալով նոյեմբերյան շարժումներին հայերի մասնակցությանը, «Բեյրութ» թերթը գրում էր. «Մենք ուղղակի հիացած ենք մեր հայ եղբայրների զգացումների վրա»[7]։ Իսկ պրեմիեր մինիստր Ռիադ Սոլհը նոյեմբերի 30-ի իր պրես-կոնֆերանսում հայտարարեց. «Ես հայերու ներկայությունը այս երկրին մեջ կընդունիմ գրկաբաց և առանձին հաճույքով։ Անոնք այս երկրի անկախությունը գուցե մեզմե ավելի լավ պաշտպանեն, որովհետև

---

6 Լիբանանի ազգային համագումարի նշված օրգանը, 23 նոյեմբերի 1943 թ.։

7 صحيفة «بيروت» بيروت، ٢٦ تشرين الثانى ١٩٤٣

անոնք երկար ժամանակ ապրած են բռնության տակ, պայքարած և զոհված են անկախության համար, հետևարար լավ գիտեն անկախության արժեքը։ Իմ կառավարության սիրտը բաց է հայերու համար։ Ես պիտի ընեմ այն, ինչ որ հարկավոր է, որպեսզի հետ այսու անոնք ավելի լայնորեն մասնակցին կառավարական գործերուն»[8]։ Անկասկած, այդ հայտարարություններով Լիբանանի կառավարության ղեկավարը և արաբական մամուլի ներկայացուցիչները ամենից առաջ ձգտում էին հակազդել այն չարանենգ պրոպագանդային, որ մղում էին ֆրանսիական իմպերիալիզմի գործակալները և որի արձագանքները տակավին լսվում էին մուսուլմանական տարբեր խավերի շրջանում, ոչ միայն Լիբանանում, այլև հարևան Սիրիայում։

Այդ մասին է վկայում այն իրողությունը, որ 1943 թ. դեկտեմբերի 5-ին, ընդունելով Դամասկոսի հայության պատվիրակներին, Սիրիայի Ռեսպուբլիկայի պրեզիդենտ Շյուքրի Քուվաթլին նշում էր. «Զափազանց զգացված եմ հայերու հավատարիմ կեցվածքեն։ Այդ առթիվ կուզեմ ձեզի հետևյալը հայտնել, և պետք է, որ հայտնեմ։ Վերջերս այն բսի-բսավը տարածվեցավ, որ իբր թե իսլամներու և հայերու միջև տարակարծություն և խնդիր տեղի ունեցած ըլլա։ Ասոնք բացարձակապես անհիմն խոսքեր են, զոր պաշտոնապես կներքեմ։ ...Մեր հարգանքը և վստահությունը հայերու հանդեպ համոզումի մը ուժը ունի։ Դուք, որ այս երկրի հպատակներն եք 20—25 տարիներե ի վեր միայն, կվայելեք և պիտի վայելեք այն բոլոր իրավասությունները զորս արաբ ժողովուրդը ունի այս երկրին մեջ...։ Հայերու բոլոր իրավունքները... նկատի առնված են արդեն և պիտի առնվին հետ այսու ալ... Իսկ եթե օր մը որևէ մեկը ուզե հարվածել հայերու իրավունքները այս երկրներուն մեջ, ես այդ բանին արգելք պիտի ըլլամ, ի հարկին իմ արյանս գնով»[9]։

Դեկտեմբերի 7-ին, Լիբանանի Ռեսպուբլիկայի պրեզիդենտ Բեշարա էլ-Խուրին, որը Բեյրութի հայոց առաջնորդարանն էր գնացել պաշտոնական այցով, պատասխանելով իրեն ուղղված ճառերին, ներբողել է հայերի հայրենասիրական դիրքավորումը և հայտնել, որ «Լիբանանի հայ համայնքը մեկ անբաժան մասն է լիբանանյան ազգության»[10]։

Լիբանանի նոյեմբերյան պատմական իրադարձությունները ցույց տվին, որ ֆրանսիական իմպերիալիզմի տարիներով հրահրած և արհեստականորեն կենդանի պահած ցեղային ու դավանական խտրականության, այդ խավարի ու հետամնացության ժանգոտած զենքը այլևս անզոր էր ազատության և անկախության համար մարտնչող Լիբանանի բազմազգ բնակչության դեմ։ Իրավացիորեն, Խալեդ Բեկդաշը նշում էր, որ «Լիբանանը փորձով ցույց տվեց, որ կրոնը Աստծո է, իսկ հայրենիքը՝ բոլորին։ Լիբանանի շարժումը լիբանանյան ազգային շարժում էր, զուրկ որևէ կրոնական կամ ցեղային գույնից։ Հավարավոր իսլամ, քրիստոնյա, գյուրզի և հայ ցուցարարներ կողք-կողքի բայլում էին առանց որ մեկը մյուսի դավանանքն իմանար, առանց որ կրոնական բնույթ կրող որևէ բացականչություն լսվեր. այս կամ այն համայնքին կեցցեները միայն ու միայն ուղղված էին հայրենիքին, անկախության, կոնստիտուցիային և դրոշակին...»[11]։

---

8 «Ժողովուրդի Ձայնս», 1 դեկտեմբերի 1943 թ.։
9 Նույն տեղում, 11 դեկտեմբերի 1943 թ.։
10 Նույն տեղում, 8 դեկտեմբերի 1943 թ.։
11 Նույն տեղում, 4 դեկտեմբերի 1943 թ.։

* * *

Սիրիայի և Լիբանանի ներկայացուցիչները ֆրանսիական իմպերիալիզմի հետ վարում էին ամուլ բանակցություններ զեկավարման մանդատը իրավահավասար պայմանագրով փոխարինելու համար։ Համառ կերպով, ֆրանսիական իմպերիալիստները փորձում էին մանդատը փոխարինել ստրկացուցիչ պայմանագրով։ Այդ նպատակին հասնելու համար նրանք մի կողմից ճնշում էին գործադրում անգլիական կառավարության վրա, այդ երկրներում ազատ ձեռքերով գործելու իրավունք պահանջելով, մյուս կողմից՝ աշխատում էին ազդեցություն շահել ներքին հասարակական կարծիքի վրա, կաշառել թերթերին, քաղաքական և պետական գործիչներին։

Այդպիսին էր դրությունը, երբ 1944 թ. հունվարի 1-ին, Լիբանանի կոմունիստական պարտիան[12] հրապարակեց Ազգային ուխտը, որն իր 19 հոդվածներում գծում էր անկախ և սուվերեն Լիբանանի Ռեսպուբլիկայի իրական դեմոկրատական կարգերի ուղին։ Աշխատավորական զանգվածների պահանջների հիմք դառնալով, այդ ուխտը խոշոր նշանակություն ունեցավ Սիրիայի և Լիբանանի ազգային անկախության պայքարում։

Ֆրանս-սիրիական և ֆրանս-լիբանանյան փոխհարաբերությունների հարցը Ազգային ուխտի տեսանկյունից գիտելով, Սիրիայի և Լիբանանի կոմունիստական պարտիաները պահանջում էին դրանք հիմնել այդ երկրների «ազատության և անկախության իրավունքի լիակատար ճանաչման վրա»[13]։ Անդրադառնալով ֆրանսիական իմպերիալիզմի առաջարկած ստրկացուցիչ պայմանագրերին, որոնց դեմ հանդես էին գալիս Սիրիայի և Լիբանանի ժողովրդական զանգվածները, Լիբանանի կոմպարտիայի առաջին քարտուղար Ֆարաջալլա Հելուն գրում էր, որ «ժողովուրդը սկզբունքով չի մերժեր դաշինքներու կամ համաձայնագրերու կնքումը, այլ կմերժե այս կամ այն կարգի ամեն փորձ, որ իմպերիալիզմի նոր ձևր ըլլա, կամ քողարկումը...» դաշինքներ, որոնց «կնքումը վերադարձ ըլլա իմպերիալիստական իշխանության»[14]։

Մինչև 1945 թվականի սկիզբը բանակցությունները շարունակվեցին առանց դրական արդյունքի։ Սկզբունքով ընդունելով հանդերձ Սիրիայի և Լիբանանի անկախությունն ու սուվերենությունը, ֆրանսիական իմպերիալիստները գործնականում ոչինչ չէին անում քաղաքական և զինվորական իշխանությունը Սիրիայի և Լիբանանի ժողովուրդներին փոխանցելու ուղղությամբ։ Ակներև էր, որ նրանք ուզում էին ժամանակ շահել, սպասում էին պատերազմի վախճանին, Ֆրանսիայի համար միջազգային բարենպաստ իրադրություն ստեղծվելուն։

Բանակցությունները երկար ձգձգելուց հետո, 1945 թ. հունվարին ֆրանսիական իմպերիալիստները մերժեցին Սիրիայի և Լիբանանի կառավարություններին փոխանցել տեղացիներից կազմված այն զորամասերը, որոնք գործում էին ֆրանսիական դրոշի ներքո։ Այդ մերժումը դիտելով իբրև ապա-

---

12 Կոմինտերնի լուծարքից հետո 1943 թ. դեկտեմբերին, Սիրիայի և Լիբանանի կոմունիստական պարտիայի համագումարը, ի նկատի ունենալով այն հանգամանքը, որ Սիրիայում և Լիբանանում առաջացել էին սոցիալ-քաղաքական միանգամայն տարբեր պայմաններ, որոշում ընդունեց այդ երկրներից յուրաքանչյուրի համար ստեղծել առանձին պարտիա։

13 «Ժողովուրդի Ձայն», 17 հունվարի 1945 թ.։

14 Նույն տեղում։

ցույց Սիրիայի և Լիբանանի ապագայի նկատմամբ Ֆրանսիայի իմպերիալիստական դիտավորությունների մասին, Բեյրութի և Դամասկոսի կառավարությունները որոշեցին հակահարված տալ համապատասխան միջոցառումներով։

Իբրև անկախ և սուվերեն պետություններ Սիրիան և Լիբանանը միջոցներ ձեռք առան ազգային բանակ կազմելու համար։ Սակայն, ֆրանսիական իմպերիալիստները, որոնք փաստորեն տակավին իրենց ձեռքում ունեին այդ երկրների քաղաքական և զինվորական իշխանությունը, հակադրվեցին այդ ծրագրի իրագործմանը։ Լիբանանում նրանց հաջողվեց ազգային բանակի կապակցությամբ տարաձայնություն առաջացնել իսլամների և քրիստոնյաների միջև և անորոշ ժամանակով հետաձգել ծրագրի գործադրությունը։ Իսկ Սիրիայում նրանց խաղը ձախողվեց։

Ֆրանսիական իմպերիալիստները փորձեցին Սիրիայի քրիստոնյաներին, այդ թվում նաև հայերին ներշնչել այն տպավորությունը, որ ազգային բանակը ամենից առաջ միջոց էր դառնալու իսլամների ձեռքին քրիստոնյա փոքրամասնությունները ճնշելու համար։ Սակայն, նրանց լսողներ չգտնվեցին։ Ընդհակառակը, այդ գործելակերպը Սիրիայի ներքին գործերին միջամտություն համարելով, ժողովրդական զանգվածները առանց ազգության և կրոնի խտրության հանդես եկան ազգային կառավարության կողքին, պաշտպանելով ազգային բանակ կազմելու ծրագիրը։ Հայ աշխատավորության թերթը նշում էր, որ «Հայի և արաբի, իսլամի և քրիստոնյայի արվեստական թշնամություններ առաջացնել փորձողները դարձյալ ձախողեցին իրենց նպատակներու մեջ»[15]։

Հունվարի վերջերին Սիրիայում հայտարարվեց ընդհանուր գործադուլ՝ ֆրանսիական զորքերի անհապաղ մեկնումը պահանջելով։ Ավելի քան տասը օր փակ մնացին շուկաները, հասարակական և մասնավոր հիմնարկները[16]։ Դամասկոսում, Հալեպում, Համայում, Հոմսում և ուրիշ քաղաքներում տեղի ունեցան ժողովրդական բողոքի ցույցեր։ Մի շարք վայրերում ցուցարարները բախվեցին ֆրանսիական զորքի հետ։ Ամենուրեք, և առանձնապես Հալեպում, որտեղ շատ հայեր են ապրում, հայ ժողովրդի աշխատավոր զավակները ակտիվ մասնակցություն ունեցան այդ ելույթներին։ Հայ աշխատավորության թերթի հաղորդումով, Հալեպի հայաբնակ Նոր գյուղում «...ուսանողությունը և ժողովուրդը խաղաղ ցույցերով և հայ-արաբ եղբայրության անհրաժեշտությունը շեշտող ճառերով հրավիրեցին մեր հայրենակիցները տեր կանգնելու իրենց սուրիացիի իրավունքներուն»[17]։

Ֆրանսիական իմպերիալիզմի խարխլած դիրքերը վերջնական փլուզումից փրկելու նպատակով, գերագույն կոմիսար գեներալ Բեյնեն համաձայնվեց Սիրիայի և Լիբանանի ներկայացուցիչների հետ բանակցություններ վարել տեղացիներից կազմված զորամասերը փոխանցելու հարցի շուրջը։ Բացի այդ, ընդառաջելով ազգային կառավարությունների պահանջին, նա խոստացավ աստիճանաբար ֆրանսիական զորքերը դուրս բերել Սիրիայից և Լիբանանից։

---

15 «Ժողովուրդի ձայն», 4 փետրվարի 1945 թ.։
16 Նույն տեղում։
17 Նույն տեղում։

Սակայն դեպքերի ընթացքը ցույց տվեց, որ այդ խոստումները սոսկ ձևական բնույթ էին կրում։ 1945 թ. մայիսին, երբ համայն աշխարհը տոնում էր ֆաշիզմի դեմ տարած հաղթանակը, որի նվաճման համար մղված աշխարհամարտում այնքան շատ էր խոսվել դեմոկրատիայի և ժողովուրդների ազգային ինքնորոշման իրավունքի մասին, ֆրանսիական իմպերիալիզմը ոչ միայն զորքերը չէր հեռացնում Սիրիայից, այլև այնտեղ ուղարկում էր ցամաքային և ծովային նոր միավորներ։ Նույն թվականի մայիսի 18-ին գեներալ Բեյնեն Ֆրանսիայի անունից Սիրիայի և Լիբանանի կառավարություններին հանձնեց նոր պայմանագրի նախագիծը, որն այդ երկրների անկախությունը սահմանափակում էր կուլտուր-տնտեսական ներքին ինքնավարությամբ և Ֆրանսիային տալիս էր օդային, ցամաքային և ծովային բազաներ ունենալու, ինչպես նաև ստրատեգիական կետերում մշտապես զորք պահելու իրավունքներ։ Մայիսի 19-ի համատեղ խորհրդակցությունից հետո, Սիրիայի և Լիբանանի կառավարությունների ներկայացուցիչները հայտարարեցին, որ Ֆրանսիայի այդ քայլը «ոտնձգություն է երկու երկրների գերիշխանության դեմ» և որ Սիրիան և Լիբանանը որոշել են «իրենց ջանքերն ու գործունեությունը միացնել երկու երկրների անկախության պաշտպանության համար»[18]։

Սիրիայում և Լիբանանում ծավալվեց ազգային-ազատագրական ռևոլյուցիոն շարժումների հզոր ալիք, որը տևեց մինչև հունիսի կեսերը։ Այդ երկրների հայությունը նորից կանգնեց արաբ ժողովրդի կողքին, և նրա հայրենասիրական կազմակերպությունները մասնակցեցին գործադուլներին ու ցույցերին։

Մայիսի 20-ին հրապարակվեց Լիբանանի կոմունիստական պարտիայի կենտկոմի կոչը՝ ուղղված հայ ժողովրդին։ Նշելով, որ «Երկրի ազգային իրավունքներու պաշտպանության ներկա շարժումին կմասնակցին անխտիր Լիբանանի բոլոր զավակները», կոչը շեշտում էր. «Սակայն, օտար հետադիմության հաշվույն աշխատող տարրեր, որոնք միշտ պղտոր ջուրին մեջ ձուկ որսալը արհեստ ըրած են, կփորձեն մտքերը պղտորել, քրիստոնյան և իսլամը, հայն ու արաբը իրարու դեմ հանել, յուրաքանչյուրին այնպես հավատացնել փորձելով թե այս շարժումը իրեն դեմ ուղղված է։ Իրենց խառնակիչ այս հերյուրածո սուտերով ֆաշիստա-իմպերիալիստական շրջանակները կձգտին պառակտել ժողովրդի պայքարի միասնականությունը, փոխադարձ անվստահության և անապահովության մթնոլորտ ստեղծել երկրին բաղկացուցիչ տարրերուն միջև և այսպես Լիբանանի ազգային պայքարը շեղել իր նպատակեն։

Հայ ժողովուրդ,

Լիբանանի արաբ ժողովուրդը ոչ մեկ թշնամություն ունի հայ ժողովուրդին հանդեպ։ Ընդհակառակը անիկա տոգորված է բարեկամական լավագույն զգացումներով և կհավատա թե հայ ազատասեր ժողովուրդն ալ իրեն պես կխորհի։

Մենք վստահ ենք, թե ինչպես անցյալին, նույնպես ներկայիս, հայ ժողովուրդը ձախողության պիտի մատնե ամեն գույնի գրգռիչներու դավադրությունները։ Հայ ժողովուրդը, գիտակից իր ազգային ապահովության շահերուն,

---

[18] «Ժողովուրդի Ձայն», 22 մայիսի 1945 թ.։

գիտակից թե Լիբանանի ժողովուրդին հացի և ազատության համար մղած պայքարը իր ալ պայքարն է, պիտի շարունակե տեղացի ժողովուրդին հետ հաշտ ու խաղաղ ապրելու իր հեռատես և իմաստուն քաղաքականությունը»[19]։

Լիբանանի կոմունիստական պարտիայի հայկական հատվածի ջանքերով, հայ հայրենասիրական կազմակերպությունները լայն աջակցություն էին ցույց տալիս Լիբանանի ազգային համագումարի գործունեությանը։ Ազգային համագումարի միջոցառումներին բացի կոմունիստներից, մասնակցում էին նաև Հնչակյան, Ռամկավար պարտիաները, ինչպես նաև Լիբանանահայ Վերածնունդ միությունը և ուրիշներ։ «Ժողովուրդի Ձայն», «Արարատ» և «Զարթոնք» օրաթերթերը, արձագանքելով Ազգային համագումարի միջոցառումներին, կոչ էին անում հայ հասարակության ակտիվ մասնակցության համար։

Մայիսի 19—22-ի ելույթներից հետո, մայիսի 30-ին, առաջ քաշելով բոլոր պարտիաների, բոլոր կազմակերպությունների մասնակցությամբ համաժողովրդական շարժում ստեղծելու անհրաժեշտությունը, Լիբանանի ազգային համագումարը որոշում ընդունեց ամբողջ երկրում ընդհանուր գործադուլ անցկացնելու մասին։ Ազգային համագումարի գործկոմի առաջարկով, գործադուլի կազմակերպիչ հանձնաժողովի մեջ մտան նաև հնչակյանների, ռամկավարների և հայ կոմունիստների ներկայացուցիչները[20]։ Բեյրութի հայաբնակ թաղերում՝ Բուրջ Համուդ, Խալիլ Բեղավի, Նոր Հաճրն, Կարանտինա, Մար Մխայիլ, Մեղավվար, Էշրեֆիե, Զուկակ էլ-Բլաղ և այլն, աշխատավորներից ստեղծվեցին գործադուլային հանձնախմբեր, որոնք հսկայական գեր կատարեցին հայ ժողովրդական զանգվածներին ընդհանուր գործադուլի ոլորտը մղելու ուղղությամբ։

Նույնպիսի հայրենասիրական գիրք որդեգրեց նաև Սիրիայի հայությունը։ Մայիսի 25-ին, ընդառաջելով հայ կոմունիստների, հնչակյանների, ռամկավարների և անպարտիական խմբակցությունների ներկայացուցիչների Խորհրդակցական ժողովի առաջարկությանը, Դամասկոսի ազգային-թեմականը գումարվեց, և միաձայնությամբ ընդունեց հետևյալ բանաձևը. «Սուրիո հայ ժողովուրդը որպես սուրիական քաղաքացի և իր քաղաքացիական պարտականության գիտակից, ներկա տագնապալի օրերուն, իրեն համար նվիրական պարտք կհամարե հայտարարել թե հայ զանգվածը Սուրիո ազգային կառավարության կբերե իր բովանդակ գործակցությունն ու զոհողությունը, զորս կպահանջե օրվան կացությունը, և իր բոլոր մտածումներն ու գործունեությունը կհիմնե այս սկզբունքին վրա»[21]։ Տարբեր դիրքով հանգես չի եկել նաև հյուսիսային Սիրիայի հայությունը։

Դրությունը շափազանց ծանր էր Սիրիայում։ Երկիրը գտնվում էր զինադադարի նախօրյակին։ Հետագա վճռական իրադարձությունները դիմագրավել կարողանալու մտահոգությամբ, Սիրիայի կառավարությունը ուժեղացրեց ազգային բանակ կազմելու աշխատանքները։ Դամասկոսում և Հալեպում հաստատվեցին հատուկ գրասենյակներ կամավորներ հավաքագրելու համար։ Թերթերի հաղորդումով, Դամասկոսի «բոլոր թաղերուն մեջ» տեղի էր ունենում «կամավորների արձանագրություն»[22]։

---

19 «Ժողովուրդի Ձայն», 20 մայիսի 1945 թ.։

20 Նույն տեղում, 2 հունիսի 1945 թ.։

21 Նույն տեղում, 26 մայիսի 1945 թ.։

22 Նույն տեղում, 22 մայիսի 1945 թ.։

Այդ շարժումը ժողովրդականություն գտավ նաև հայ աշխատավորության շրջանում։ «Ժողովուրդի Ձայն» թերթը գրում էր, որ «սուրիական ազգային նորակազմ բանակին մեջ կամավորագրվելու համար ներքին գործոց նախարարության մոտ դիմում» կատարում էին նաև հայերը։ Հալեպում հայերի կամավորագրմանը ուժ էր տալիս ազգային-թեմական իշխանությունը։ «Էնոսը» թերթը, արձագանքելով Հալեպի ազգային իշխանության մեկ կոչին, որը «ֆրանսիական բանակի հայ զինվորներին և պաշտոնյաներին թելադրում էր անմիջապես հրաժարվել և ծառայության մտնել ազգային բանակում», նշում էր, որ «հայ համայնքը բազմաթիվ ժողովներ դումարեց և անհրաժեշտ պատեց մասնակցել ազգային բոլոր միջոցառումներին, նյութական թե բարոյական ամեն կարգի զոհողություններին, մինչև որ Սիրիան ձեռք բերե իր իրավունքները, տիրանա իր ամբողջական անկախության և սուվերենության»[23]։

Սակայն, հայերի այդ վերաբերմունքն ամենևին դուր չէր գալիս ֆրանսիական իմպերիալիզմի գործակալներին։ Նրանք առիթ բաց չէին թողնում հայ և արաբ ժողովուրդների սերտ բարեկամությունը խախտելու համար։ Աղգամիջյան կռիվներ ստեղծելու, և այդպիսով անկախության պայքարում հայ-արաբական միասնությունը ջլատելու նպատակով, նրանք բաց թողեցին մի շարք արաբերեն թռուցիկներ, հայերին ներկայացնելով Սիրիայի «անկախության հակառակորդ տարր մը»[24]։ Այդ կապակցությամբ, իրեն ուղղված հարցումներին պատասխանելով, Սիրիայի մինիստրների խորհրդի նախագահը հայտարարեց. «Հայերը սեցուկ կանգնեցան մեր շարժումին։ Հայկական պատվիրակություն մը ինձ մոտ այցելեց և հայերու միասնությունը հայտնեց։ Իսկ անդին Ամերիկայի հայերը ընդունելություն մը սարքեցին ի պատիվ Սան Ֆրանչիսկոյի մեր ներկայացուցիչներին։ Սուրիան բոլոր սուրիացիներուն հայրենիքն է»[25]։

Մայիսի 29-ին, ֆրանսիական տանկերն ու զրահապատ մեքենաները, որոնք ավելի քան տասը օրե ի վեր շրջում էին քաղաքների և գյուղերի փողոցներում, հարձակման անցան անզեն Ժողովրդի դեմ։ Ֆրանսիական զորքերը կրակեցին ցուցարարների վրա, և ցույցերը վերածվեցին փողոցային մարտերի։ Նրանք ռմբակոծեցին Դամասկոսի պառլամենտի շենքը, գազանաբարո արարքներ գործեցին Հոմսում, Համայում, Հալեպում, Ջեբել Դրուզում և այլ վայրերում։ Նրանք հրդեհում էին ոմբոստ թաղամասերը, գլխատում գերի ընկած քաղաքացիներին։ Այդ բարբարոսությունների դեմ, Սիրիայում Սովետական Միության դեսպանը բողոքեց գեներալ Բեյնեին, պահանջելով, որ վերջ տրվեն դրանց։ Բացի այդ, Սովետական Միությունը առաջարկեց Մեծ Բրիտանիայի, ԱՄՆ-ի և Չինաստանի կառավարություններին միջոցներ ձեռք առնել Սիրիայի և Լիբանանի կռիվները դադարեցնելու և հարցը խաղաղ ճանապարհով կարգավորելու համար։

Սիրիայի և Լիբանանի հետ բանակցություններ սկսելով, ֆրանսիական իմպերիալիստները կատարեցին մի շարք զիջումներ։ Դրանցից ամենակարևորն էր՝ տեղացիներից կազմված «մասնավոր» զորամասերի փոխանցումը։

---

[23] «النصر» دمشق ٢٩ حزيران ١٩٤٥

[24] «Ժողովուրդի Ձայնը», 22 մայիսի 1945 թ.։

[25] Նույն տեղում։

Սակայն գլխավոր հարցը մնում էր առկախ։ Ոչ Ֆրանսիան, ոչ էլ բրիտանական իմպերիալիստները չէին համաձայնվում իրենց զորքերը հեռացնել այդ երկրներից։ Նշելով, որ անգլիացիները փորձում են Սիրիայում և Լիբանանում գրավել ֆրանսիացիների տեղը, գեներալ դը Գոլը պարզ հայտարարում էր, որ Ֆրանսիան որոշել է չհրաժարվել այդ երկրներում ունեցած իր շահից։ Տակավին Սիրիայի և Լիբանանի ժողովուրդները պետք է անցնեին պայքարի դժվար ուղի այդ հարցի լուծմանն հասնելու համար։

1945 թ. օգոստոսի 31-ին Սիրիայի և Լիբանանի կոմունիստական պարտիաների հայկական հատվածների գլխավորությամբ և Ս.—դ. հնչակյան, Ռամկավար ազատական պարտիաների գործունեությամբ ստեղծվեց Սիրիայի և Լիբանանի հայ ազգային խորհուրդը, որին հետագայում միացան Լիբանանահայ վերածնունդ միությունը, Սովետական Հայաստանի բարեկամների ընկերությունը, Սովետական Հայաստանի հետ մշակութային կապի կանանց ընկերակցությունը, գեներալ Բաղրամյանի անվան երիտասարդական միությունը, Դպրոցասեր կանանց ընդհանուր միությունը, Արաբկիրի հայրենակցական միությունը, Մալաթիայի կրթասիրաց ընկերակցությունը, Հայրենադարձ հայերու ընդհանուր միությունը և ուրիշ բազմաթիվ կազմակերպություններ։ Հայ ազգային խորհրդի պաշտոնական հայտարարության 6-րդ հոդվածում ասված էր «Ազգային խորհուրդը պիտի աջակցի Սուրիո և Լիբանանի ազգային-դեմոկրատական շարժմանը և հայ իրականության մեջ արգելելու որևէ արարք, որ կրնա վնասել Սուրիո և Լիբանանի հայության վարկին և հայեվարաբ խաղաղ հարաբերությանց»[26]։

1945 թ. դեկտեմբերի 13-ին Լոնդոնում ստորագրվեց անգլո-ֆրանսիական համաձայնագիրը Սիրիայի և Լիբանանի մասին։ Այդ համաձայնագիրը, որի հիմնական նպատակն էր այդ երկրները բաժանել Անգլիայի և Ֆրանսիայի միջև, բախվեց արաբ ժողովրդի վճռական մերժմանը։ Նշելով, որ անգլո-ֆրանսիական համաձայնագիրը «ոտնձգություն մըն է երկրի գերիշխանության և անկախության դեմ», «Լիբանանի կուսակցությանց, կազմակերպությանց և սենդիկաներու (Արհմիությունների—Հ. Թ.) ներկայացուցիչները միաձայնությամբ որոշեցին Լիբանանի ժողովուրդը հրավիրել գործադուլի»[27], որը տեղի ունեցավ 1946 թ. հունվարի 21-ին։ Հայ ազգային խորհուրդը խոշոր դեր կատարեց հայ ժողովրդական մասսաները անգլո-ֆրանսիական այդ տխրահռչակ համաձայնագրի դեմ բռնկված շարժումների ոլորտը ներգրավելու գործում։

Անգլո-ֆրանսիական համաձայնագրի դեմ հանդես եկավ նաև Սիրիայի ժողովուրդը։ Սիրիական և լիբանանյան պառլամենտների դեպուտատները, հայտարարելով, որ այդ համաձայնագիրը ոտնձգություն է ոչ միայն Սիրիայի և Լիբանանի անկախության, այլև ՄԱԿ-ի սկզբունքների դեմ, պահանջեցին հարցի քննությունը հանձնել Անվտանգության խորհրդին։

Անվտանգության խորհրդի նիստում անգլո-ֆրանսիական իմպերիալիստները մինչև վերջն էլ միասնական դիրքով հակադրվեցին Սիրիայի և Լիբանանի արդար պահանջներին։ Նրանց օգնությանը փութացին ԱՄՆ-ի իմպերիալիստները, բայց ապարդյուն։ Սովետական Միության պատվիրակը հան-

26 «Ժողովուրդի Ձայնը», 2 սեպտեմբերի 1945 թ.
27 Նույն տեղում, 30 դեկտեմբերի 1945 թ.

դես եկավ անգլո-ֆրանսիական զորքերի Սիրիայից և Լիբանանից անմիջապես և առանց պայմանի հեռացման օգտին, օգտագործելով վետոի իրավունքը։ Անգլո-ֆրանսիական իմպերիալիստները պարտավորվեցին 1946 թ. ապրիլի 17-ին Սիրիայից և այդ տարվա վերջում Լիբանանից հեռացնել իրենց զորքերը։ Դրանով այդ երկրները տիրացան իրենց քաղաքական անկախությանը, նոր էջ բացվեց նրանց պատմության համար։

* * *

Տակավին 20-ական թվականներից, ֆրանսիական իմպերիալիստները երազում էին հայերին իբրև միջոց օգտագործել Սիրիայի և Լիբանանի ժողովուրդների ազգային-ազատագրական շարժումները ճնշելու համար։ Սակայն այդ երազը մնաց անիրագործելի շնորհիվ հայ աշխատավորության ջանքերին և հակառակ ներքին հետադիմական տարրերի, այդ թվում և դաշնակների կամքին։

Անդրադառնալով 1943 թ. վերջերին Սիրիայի և Լիբանանի ազգային անկախության պայքարում հայերի խաղացած դերին, Հովհ. Աղբաշյանը նշում էր, որ ֆրանսիական իմպերիալիստները «...այն սխալ հաշիվը ըրին, թե հայերը իրենց համար պահեստի ուժ մը պիտի դառնան ընդդեմ արաբ ժողովուրդի ազգային-ազատագրական շարժման։ ...Հայերը, ընդհակառակը, կանգնած են արաբ ժողովրդի կողքին և կբաժանեն անոր ցավերը, հույսերը և պայքարները»[28]։

Հետագայում էլ, հայերը հանդես եկան Սիրիայի և Լիբանանի ազգային անկախությունը պաշտպանելու օգտին, երբ ամերիկյան իմպերիալիստներն իրենց տեղական գործակալների, այդ թվում և դաշնակների ջերմեռանդ աջակցությամբ փորձում էին այդ երկրներում անգլո-ֆրանսիական զորքերի մեկնումով ստեղծված այդպես կոչված «վակուումը» լցնել...։ Ամերիկյան գաղութացման փորձերի դեմ մղված պայքարը, որը հանգեց Լիբանանի ժողովրդի 1958 թվականի զինված դիմադրությանը, բազմաթիվ զոհեր խլեց նաև հայ ժողովրդի արժանավոր զավակների՝ հայ աշխատավորության շարքերից։

Նպաստելով արաբ ժողովրդի քաղաքական և տնտեսական անկախության արդար երազանքների իրականացմանը, հայ աշխատավորության կազմակերպությունները ամրապնդում են հայ և արաբ ժողովուրդների բարեկամությունը, պայմաններ ստեղծում երկու ժողովուրդների եղբայրական միասնության, խաղաղ ու բարօր կյանքի համար։ Այդ տեսակետից, 1943—1945 թթ. Սիրիայի և Լիբանանի ազգային անկախության վճռական պայքարին հայերի մասնակցությունը խոր հետքեր է թողել արաբական երկրների հայկական գաղթավայրերի պատմության մեջ։

---

28 «Ժողովուրդի Ձայնը», 7 հունվարի 1944 թ.։